

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆՈՐԱԳՈՅՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐԻ ՄԱՍԻՆ

Հրանտ Ասատուրն ութսունականների բոլոր եռանդուն անդամներից էր, գաղափարակիցը Գրիգոր Զօհրապի, Արփիար Արփիարեանի, Տիգրան Կամսարականի, Լեւոն Բաշալեանի, Մեղքոն Կիւրճեանի, Արչակ Զօպանեանի եւ մի շարք այլ գրողների, որոնք հրապարակ նետուեցին անցեալ դարի 80-90ական թուականներին՝ բարեփոխման ու յեղաշրջման գաղափարներով եւ գեղադիտական նոր դրոյթներով:

Լինելով դրաքննադատ, պատմագէտ, քերականագէտ, թատերագէտ եւ տեսաբան, Հ. Ասատուրն ընդհանրացնում էր իր մէջ ժամանակաշրջանի գրականագիտական եւ պատմագիտական նուաճումների այն մակարդակը, որով բնորոշւում էր ԺԹ. դարավերջի արեւմտահայ իրականութիւնը: Ահա այս ժամանակաշրջանի գաղափարական բարդ ելեւէջների բնութագիրն է ներկայացնում Սրբուհի Հայրապետեանի նորերս հրատարակուած «Հրանտ Ասատուր» մենագրութիւնը, որը լոյս է տեսել 1979 թուականին Լոս Անջելոսում՝ «Գրամարտիկ» տպարանից*: Այստեղ, Ասատուրի կեանքին եւ գրական գործունէութեանը զուգահեռ, տրւում են այն բազմաթիւ առնչութիւնները, որոնցով նա կապւում էր գրական նոր շարժման այլա-

* Դոկտ. Սրբուհի Պօղոսի Հայրապետեանը ներկայումս Կալիֆոռնիայի Համալսարանի (Լոս Անջելոս) Հայագիտական ամբիոնի գիտաշխատողներից է եւ միաժամանակ վարում է դասախօսական պաշտօն: Նա երկար տարիներ աշխատել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Գրականութեան Ինստիտուտում (1963-1977 թթ.), ուր եւ, 1968 թուականին, պաշտպանել է իր գիտական աւարտաճառը՝ նուիրուած արեւմտահայ գրող և հրապարակախօս Արմենակ Հաբիւնուն: Ս. Հայրապետեանը Գրականութեան Ինստիտուտում է պատրաստել նաեւ սոյն՝ «Հրանտ Ասատուր» մենագրութիւնը: Այժմ նա գրում է մէկ ուրիշ ամբողջական ուսումնասիրութիւն, որն ընդգրկելու է հայ գրականութեան պատմութիւնը՝ սկզբից մինչեւ մեր օրերը, նախատեսուած՝ համալսարանական ուսանողութեան համար:

դան խնդիրների հետ՝ տալով միջավայրի գիտական եւ քննական դնահատականը:

Հ. Ասատուրի գրական եւ մանկավարժական գործունէութեան մասին խօսել են արեւմտահայ մտաւորականներից շատեր՝ Ա. Արփիարեանը, Յ. Օշականը, Ա. Ալաջարեանը, Մ. Թէօդօլեանը, Հ. Ս. Երեմեանը, Թ. Աղատեանը եւ ուրիշներ: Յօդուածային բնոյթի այս համառօտ բնութագրումները, սակայն, որ տուել են նրանք, լիովին չեն բացայայտում Հ. Ասատուրի գրական վաստակը, նրա տեսական հայեացքների համակարգը: Գիտական քննութեան չի ենթարկուել Ասատուրի աշխարհահայեացքը, նրա մանկավարժական եւ հասարակական գործունէութիւնը:

Ս. Հայրապետեանի «Հրանտ Ասատուր» մենագրութիւնը, որը հիմնւում է բանասէր-քննադատի անտիպ եւ տպագիր աշխատութիւնների, ինչպէս նաեւ մամուլում ցրուած նրա բազմաթիւ յօդուածների վրայ, առաջին փորձն է՝ իր ամբողջութեան մէջ ներկայացնելու Հ. Ասատուրի գրական-բանասիրական ժառանգութիւնը, նրա ազգային-մանկավարժական գործունէութիւնը՝ կապուած ժամանակի գեղագիտական ըմբռնումների եւ գրական միջավայրի հանգամանքների հետ: Մենագրութիւնը բաղկացած է չորս զվուխներից՝ «Կեանքը, հասարակական գործունէութիւնը», «Հրապարակախօսը», «Ասատուրի գրական-քննադատական հայեացքները» եւ «Ասատուրը՝ դիմանկարիչ եւ կենսագիր»:

Պոլսահայ մտաւորական միջավայրի հետաքրքիր անցուղարձերի մէջ են պատկերւում Հ. Ասատուրի երիտասարդութիւնն ու կեանքի յետագայ ուղին, նրա ուսուցչիչները (Մ. Զեբազ, Բ. Քէչեան, Զուլախեան-երգահանը), փարիզեան տարիների ուսումնառութիւնը, Գրիգոր Օտեանի հետ ունեցած բարեկամութիւնը եւ, ապա, ութսունականների եռանդուն գործունէութիւնը:

Յայտնի եւ նորայայտ տուեալների հիման վրայ հիւսւում են Հ. Ասատուրի կեանքի գրուածները, բացայայտւում՝ նրա անհատականութիւնը, ճաշակն ու նախասիրութիւնները, որոնք յետագայում բացատրութիւն պիտի տային Հ. Ասատուրի աշխարհայեացքին ու նրա գրական-պատմական ըմբռնումները լուսաբանելուն: Ս. Հայրապետեանը գուրս է գալիս Հ. Ասատուրի կենսագրութեան ոլորտներից եւ ներկայացնում պոլսահայ հասարակական կեանքն ու ժամանակի գրական միջավայրը իր լայն առնչութիւններում:

Գրական խնդիրների ու անցուղարձի համադրական իմացութեամբ են շարադրուած Հ. Ասատուրի հետաքրքրութիւնները, գրական ու ազգային կեանքին մերաբերող նրա գաղափարները, յատկապէս այն տարիներին՝ երբ Ա. Արփիարեանը, Գ. Զօհրապը, Տ. Կամսարեանը, Ա. Յարութիւնեանը, Վ. Մարէզեանը, Մ. Շամտանճեանը

նը, Լ. Բաշալեանը եւ ուրիշներ, համախմբուած «Արեւելք» եւ «Մասիս» պարբերականների շուրջ, հանդէս եկան դրականութեան եւ լեզուի իրապաշտական սկզբունքների պաշտպանութեամբ: Հէնց այս պարբերականների հիշեցում էր՝ որ դրսեւորուեցին Հ. Ասատուրի ոչ միայն գրական, այլ եւ հրապարակախօսական կարողութիւնները՝ հայ մշակութի եւ ազգային գործի այլեւայլ հարցերի շուրջ:

«Բարոյական կազդուրման» պահանջներ առաջադրող արեւմտահայ մամուլը նոր տեսանկիւնից էր վերլուծում ընտանիքի, կնոջ ազատագրութեան, դպրոցի ու ընկերութեան հարցերը: Ժամանակի այս խնդիրները դառնում են Հ. Ասատուրի հետադատութեան նիւթերը: Նա ուշադրութիւն էր դարձնում յատկապէս հարցերի տընտեսական կողմի պարզաբանմանը, որի վրայ յենուած միայն պիտի առաջանար հայ մշակութի ապագան: Այս են հաստատում նրա առաջարկները՝ եւրոպական տնտեսագիտական մտքին ծանօթանալու վերաբերեալ: Սրա վրայ պէտք է հիմնուէր կրթութեան, գրականութեան եւ մամուլի զարգացումը: Բազմաթիւ յօդուածներով նա անդրադառնում է լրագրի հանրագոյտ դերի, նրա դադարաւարական բովանդակութեան եւ ուղղութեան հարցերին, գրքի հրատարակութեան, յոբելեանների կազմակերպման եւ ուրիշ շատ խնդիրներին: Յատուկ տեղ է յատկացուած Հ. Ասատուրի մանկավարժական գործին, կրթութեան ու դատարարական գասաւանդման սկզբունքների, կրթական ծրագրի, դասագրքերի պատրաստման եւ ուրիշ շատ հարցերի պարզաբանմանը:

Մենագրութեան հեղինակը մի հետեւողական եւ տրամաբանական յաջորդականութեամբ բացատրում է Հ. Ասատուրի հասարակական հայեցողութիւնը, դէպի կրօնն ու եկեղեցին ունեցած համոզումները՝ ուրուագրելու համար Ասատուր-հրապարակախօսի եւ մտաւորականի աշխարհահայեացքը. իսկ դա հնարաւորութիւն կը տար աւելի ճիշտ ըմբռնելու Ասատուր-քննադատի եւ դիմանկարչի հայեացքներն ու մտածողութեան համակարգը: Ազգային առաջընթացի տեսանկիւնից քննադատուած է կղերականութիւնը, անխախտ ու սրբազան դիտում եկեղեցին եւ կրօնը, որոնք պէտք է միաձուլէին ազգը եւ կեանքի ուղեկից դառնային նրա համար:

Ժամանակի հանգամանքների եւ դարաշրջանի փոխափայական եղբայրանգամների միաձուլուած ներդաշնակութեամբ են դրսեւորւում Հ. Ասատուրի փոխափայական համոզմունքները, որոնք մերթ հանդէս են գալիս իբրեւ կողմնակից Փրանսիացի դադարաւարապաշտ Բ. Կարոյի «հոգեպաշտական» սկզբունքներին՝ պաշտպանելով Աստուծոյ դադարաւարը, մերթ որպէս հիացող Օ. Կոնտի եւ Լ. Բիւխեների բանապաշտական իմացութեան: «Բայց եւ այնպէս, — գրում է Ս. Հայրապետեանը, — ”դարապաշտ դպրոցին անհաւատարի քարոզու-

թիւնները” տխրեցնում են նրան եւ նա փորձում է գտնել մի ապաւէն, որն իրեն կապէր իր մանկութեան Աստուծոյ եւ հոգեկան սպեղանի դառնար իր էութեանը»:

Անցեալ դարի 80-90-ական թուականների գրական միջավայրը եւ դրականութեան խնդիրներն ու հարցադրումները իրենց դիտական լուսաբանութիւնն են տալիս «Ասատուրի գրական — քննադատական հայեացքները» արխիւում, ուր մենագրութեան հեղինակը ձգտում է համակողմանիօրէն ընդգրկել Հ. Ասատուրի գրականագիտական վաստակը, նրա տեսական — քննադատական հայեացքներն ու սկզբունքները:

Ճիշտ է նկատուում այն հանգամանքը՝ որ Ասատուր-հրապարակախօսի հասարակական կողմնորոշումներն են թելադրել Ասատուր-քննադատի գրական-գեղագիտական չափանիշերը, իրապաշտական դպրոցի հիմնաւորման այն յամառ ջանքերը, որոնց ձեռնամուխ եղաւ ութսունականների տաղանդաւոր փաղանգը: Սրանք՝ յեղաշրջող իրենց դադարաւարներով փորձում էին ամրացնել ազգութեան գոյութեան հիմքերը՝ լեզուն, դպրոցը, գրականութիւնը: Այստեղ արդէն լեզուութեան առարկայ են դառնում արեւելահայ եւ արեւմտահայ կեանքի առնչութիւնները, արեւելահայ գրականութեան եւ արեւմտի նորօրեայ նուաճումները, որոնք արդէն կանխորոշել էին իրապաշտական գրականութեան ապագայ զարգացումը: Այս յարաբերութիւններում էլ վեր են հանում Հ. Ասատուրի տեսակէտները գրական նոր գեղագիտութեան վերաբերեալ՝ արեւելահայ տեսական խնդիրների եւ արձակի ժողովրդական ոգու մասին, տեսակէտներ, որոնք պէտք է «բարոյական ուժ» դառնային՝ քարեփոխելու արեւմտահայ իրականութիւնն ու բարքերը:

Այս առումով՝ ուսումնասիրութեան հեղինակն անդրադառնում է արձակի զարգացման հարցերին, հիմնաւորելու համար այն մեծ յեղաշրջումը, որով իրապաշտական ուղղութիւնը տիրապետող դարձաւ արեւմտահայ գրականութեան մէջ:

Ս. Հայրապետեանը մերժում է գրական շրջաններում լայնօրէն տարածուած այն ակնաւ տեսակէտը, որի համաձայն արեւմտահայ ամբողջ գրականութիւնը համարւում էր՝ օտար, յատկապէս Փրանսիական ռոմանտիկ գրականութեան, ազդեցութեան արդիւնք: Այս կարծիքն են արտայայտել Ա. Զօպանեանը, Տ. Կամսարականը, Ա. Յարութիւնեանը եւ ուրիշներ, գտնելով, որ ռոմանտիկական դպրոցը ամբողջովին չեղեց արեւմտահայ գրականութեան քննական ընթացքը: «Ռոմանթիզմ, կամ նաթուալիզմ — յայտարարում էր Ա. Յարութիւնեանը —, իրենց քաղաքական իսկութեան մէջ, մանաւանդ Փրանսական կրնային ընթալ: Հայ գրականութեան մը ուրոյն գոյութիւնը՝ օտար դպրոցի մը կեղծ պիտակովը չպիտի կրնար փրկուել»:

Յ. Տերոյենցի ազգային — դրական գործունէութեան բացայայտում, բոլոր դէպքերում, սրանք անցեալի հայ մշակութի արժէքաւոր հետազոտութիւններ են: Նոյնպիսի միտումով են գրուած նաեւ պատմագիտական այնպիսի աշխատութիւններ, ինչպիսիք են «Կ. Պոլսոյ Հայերը եւ իրենց Պատրիարքները», «Կ. Պոլսոյ հայ եւ յոյն դպրոցները 1870էն առաջ», որոնք դրսեւորում են իբրեւ հայութեան հոգեւոր գոյութիւնն ու հոգեբանութիւնը հաստատող արժէքներ: Սրանք ունեն ազգային ինքնաճանաչման խնդիր եւ արտացոլում են նաեւ Հ. Ասատուրի ազգային-քաղաքական համոզմունքները:

Մենադրութեան մէջ Հ. Ասատուրի գրական ժառանգութեան ամենաբարձր գնահատականը տրւում է նրա «Դիմաստութիւններ» հատորին: Եւ որպէսզի աւելի պարզօրէն ընկալուի ուսումնասիրող հեղինակի այդ թանկարժէք կտակի իսկական արժէքը, Ս. Հայրապետեանը նիւթի իմացութեան գիտական կարողութեամբ, տեսական մի ընդարձակ շեղումով, բացայայտում է գրական դիմանկարի տեսակներն ու առանձնայատկութիւնները, քննելով գրական այդ սեռի եւրոպական եւ հայկական օրինակները: Համեմատական մեկնութիւնները Հ. Ասատուրի եւ արեւմտահայ միւս դիմանկարիչների (Տ. Կամսարական, Գ. Զօհրապ, Ա. Զօպանեան, Ա. Յարութիւնեան) միջեւ՝ տեսանելի են դարձնում Ասատուր-դիմանկարչի կարողութիւնները գրական այդ սեռի տիրապետման գործում, գրողի անհատականութեան, նրա անձնական եւ հասարակական միջավայրի ցայտուն պատկերմամբ: «Այս տեսակէտից — գրում է հեղինակը — Ասատուրի մեթոդը, այսինքն կենսագրական մօտեցումը, ներառում է գրողի կամ գործչի կեանքի փաստական վաւերացումը՝ հոգեբանական վերլուծութեամբ եւ պատմական իրադրութեան ընթացքով: Այսինքն հանդէս է դալիս որպէս ամենատարբեր ժանրերի ինքնատիպ մի շաղախ, վաւերագրական արժանահաւատ տարեգիրք, ուր առկայ են կենսագիրն ու յուշագիրը, եւ մասամբ քննադատ-գրականագէտը: Ծիշտ է, այս մեթոդը մեղանշում է իր սուրիւնկտիւնութեամբ, բայց, երբ դիմանկարիչը խորապէս հաշուի է առնում գրողի տեղն ու դերը իր ժամանակի գրական-հասարակական միջավայրում, արդիւնքը լինում է մեծ եւ նշանակալից»:

Բնաւորութիւնների իւրաքանչեւ գծերի ցուցադրումը կեանքի դրուագների հետաքրքիր հիւսուածքում, միջավայրի անցողաբանութիւնն եւ դիմանկարի գրական դաւանանքներին միախառնում, վերածւում է գեղարուեստական կերպարի, որը տպաւորութիւն է թողնում ընթերցողի վրայ եւ դրոշմւում յիշողութեան մէջ: Այս առումով՝ աշխատութեան մէջ ներկայացուած չորս դիմանկարների (Գրիգոր Օտեան, Նիկողայոս Զօրայեան, Եղիա Տէմիրճիպաշեան եւ Գրիգոր Զօհրապ) հմուտ վերաստիմումով, Ս. Հայրապետեանը հաս-

նում է շարադրանքի գեղարուեստականութեան բարձր մակարդակի՝ այն զուգակցելով նուրբ եւ ընդհանրացուած դատումներով:

Ծիշտ է նկատուած՝ որ Հ. Ասատուրի արուեստում իրար են ձուլւում գեղանկարչի եւ քննադատի կարողութիւնները. կարողութիւն՝ որը գնահատում էր իւրաքանչիւր գրողի ու գործչի տեղն ու դերը գրական-հասարակական կեանքում, բաղմաթիւ մարդկանց եւ միջավայրի յարաբերութիւններում ներկայացնելով դիմանկարի գրական եւ մարդկային նկարագիրը. մի տեսակ «գեղարուեստական փաստագրում, ուր առկայ է հոգեբանի, վիպողի, պատմաբանի եւ նկարչի մանրագին վերլուծութեան միախառնում շաղախը»:

Բանասիրական բաղմաթիւ փաստերի ճշգրտումները՝ Ս. Հայրապետեանը համարում է «Դիմաստութիւններ»ի ամենակարեւոր արժանիքներից մէկը: Դիմանկարներից իւրաքանչիւրի կեանքի կամ գործունէութեան հանգամանքների բացայայտումը՝ տարբերութեամբ ու փաստական մանրամասնութիւններով, Ստ. Ոսկանի ու Յակոբ Պարոնեանի ծննդեան թուականների ճշտումը, ծածկանունների վերծանումը, անստորագրի յղումները հեղինակային անունների եւ դրական շատ ուրիշ փաստերի յայտնաբերումը, բարձրացնում են գրական-բանասիրական արժէքը «Դիմաստութիւններ» հատորի, որը դառնում է մի անդնահատելի յուշամատեն՝ դարաւերջի պոստհայ մտաւորականութեան եռանդուն գործունէութեան մասին:

Փաստական տուեալների գնահատման նոյն տեսանկիւնից է վերլուծւում «Աշխարհաբար մատենագրութեան պատմութիւն» ընդարձակ ձեռագիր աշխատութիւնը: Կենսագրութիւնների այս շարքը, ուր հայ գրականութեան պատմութիւնը դասակարգւում է ըստ աշխարհաբար լեզուի զարգացման ընթացքին, գնահատութեան է արժանանում մատենագրական աղբիւրների եւ կենսագրական բաղմաթիւ փաստերի արձանագրման առումով միայն, որովհետեւ ուրուագծային այս գործում գրական արժէքների գնահատման չափանիշը հանդիսանում է լեզուական եւ ոչ թէ գեղարուեստականութեան սկզբունքը:

Հետեւողական եւ կուռ տրամաբանութեամբ գրուած այս ուսումնասիրութեան մէջ հաւաքուած եւ ի՛ մի են բերուած Հ. Ասատուրի տպագիր եւ անտպագիր գրքեր, դասակարգուած՝ առանձին բաժիններում, ենթարկուած՝ մանրագին հետազոտման: Գրական-բանասիրական քննութիւնը մենագրութեան մէջ նոյնքան հետաքրքիր է եւ արժէքաւոր, որքան գրականագիտական եւ գեղագիտական մեկնաբանութիւնները: Այս իմաստով յատկանշական է աշխատութեան վերջին գլուխը, ուր դիմանկարի սեռի տեսական չոր հարցադրումների կողքին բարձրանում են որոշ դիմանկարների գեղարուեստական փայլուն վերլուծութեան տպաւորիչ օրինակներ:

Սրբուհի Հայրապետեանի այս մենագրութեան մէջ թերեւս կարելի է որոշ կէտերում վիճարկել կամ առանձին դիտողութիւններ անել հեղինակի կատարած այս կամ այն մեկնարանութեան շուրջ, սակայն գլխաւոր՝ հանդուցային լինելիւնների դիտական վերլուծումները եւ հետազոտողի սկզբունքային ելակէտերի ստուգութիւնը երկրորդական են դարձնում նման մեկնարանութիւնները:

Աւելցնենք՝ որ դրքի արժանիքներից են նաեւ լեզուն ու ոճը*: Հեղինակի պատկերաւոր ու խոհական դրելաձեւը հմայք է հաղորդել գործին, որը կարգացւում է հաճոյքով ու հետաքրքրութեամբ:

«Հրանտ Ասատուր» մենագրութիւնն արժէքաւոր ներդրում է հայ գրականութեան պատմութեան մէջ եւ այն կը մնայ որպէս արեւմտահայութեան նշանաւոր ներկայացուցիչներից մէկի կեանքն ու գործը պատկերող դիտական լուրջ ուսումնասիրութիւն: Այն պատիւ է բերում եւ իր քանիմաց հեղինակին, որը լիակատար ձեռնահասութիւն է սրբաւորել հետազոտութեան այս քնադաւառում, եւ Հայաստանի Ակադեմիայի Գրականութեան Ինստիտուտին, որի ջանքերով ծնունդ է առել Հրանտ Ասատուրի համակողմանի ուսումնասիրման գործը:

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

*) Խմբագրութիւնն համակարծիք ըլլալով հանդերձ արդոյ բանասէր Յ. Անասեանի հետ՝ Ս. Հայրապետեանի երկին քաղցրագոյն արժանիքներու մասին, կարելորդ կը համարէ նշել՝ թէ կարելի չէ վաւերացնել դրքին տպագրութեան մէջ որեւորեւէ սովետահայ ուղղագրութիւնը, յատկապէս սփիւռքեան իրականութեան մէջ: Ինչպէս, փափաքելի էր որ հմուտ հեղինակուհին աւելի բծախնդիր ըլլար հայերէն լեզուի մաքրութեան նկատմամբ խուսափելով օտար եզրերու անտեղի դործածութենէն, ինչպէս՝ սոցիալ, ռէալիզմ, ճատուրալիզմ, ժամր, օրիկլիտիւ, սուրիկլիտիւքիւն եւլն., որոնց վը հանդիպինք արդէն Յ. Անասեանի կողմէ մէջբերուած քանի մը տողերուն մէջ:

ԽՍԲ.

Résumé

LA CRITIQUE LA PLUS RÉCENTE SUR HRAND ASADUR

(HAKOB ANASSIAN)

Essayiste, publiciste, critique littéraire, pédagogue et auteur de manuels scolaires, Hrand Asadur (1862-1928) fut l'objet d'une monographie publiée en 1979 à Los Angeles par Srubhi Hayrapetean. L'auteur de la présente communication Hakob Anassian, connu pour ses nombreux travaux philologiques et surtout pour sa monumentale «Bibliologie arménienne» (*Haykakan matenagitut'iwn*) dont les deux premiers volumes ont été publiés à Erévan, présente la monographie de S. Hayrapetean avec une analyse détaillée de son contenu et de ses perspectives sociales et littéraires, soulignant qu'il s'agit de la première monographie complète sur la figure de H. Asadur, à laquelle s'ajoute une bibliographie de presque toutes ses œuvres éditées et inédites. La monographie apporte, en outre, de nouveaux éclaircissements ou précisions sur certains détails chronologiques, pseudonymes, articles publiés sans signature. Un des mérites principaux de cette monographie consiste, en outre, dans le fait qu'insérant la figure de H. Asadur dans le contexte social et culturel des Arméniens occidentaux de son époque, elle présente aussi une très bonne synthèse de ce même contexte.